

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ԴԱՅԼԻՃԻՆ ՍԷՋ

Օտար հիւրերու մեկնումէն ետք, Պատ-
րիարքարանի Դանլինը վերածուած է հան-
դիտատրանի, որ ժամը 5-ին կը յորդի ար-
դէն բազմութեա իբր հանդիսական մերազ-

Հանդէսը կը բացուի պատրիարքական ժող-
թանքով՝ երգուած ժողովականութեան երգէն
Աղա՛ Դերը, Լուսարարապետ Հայրը, հանա-
դիտականներու խոր ուշադրութեամբ մէջ դը-



Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր Գանուկ վրայ
(Պատրիարքարանի Դանլինի մէջ)

նէից, Պատրիարքական իր զահին վրայ է
Ամեն. Սրբազան. Պատրիարք Հայրը և իր
երկու կողմերը, ունի հոգևորական դասը,

կարդայ Ն. Ս. Օծութիւն Կրկնկերպ Կաթա-
ղիկոսի շնորհաւորական գիրը, զոր հանոյ-
քով ու յարգանքով կը շնորհակցենք հաս-

Առ. Ամենապատիւ Տ. Կիրեղ Արքեպս.
Պատրիարք Հայոց Սրուսաղէմի

Մերազան եղբայր,

Ուրախութեամբ օտացանք Ձեր աւետաբեր
հետազոյր Ամենապատուութեանդ գահակա-
լութեան ժամանակի եւ Մեզ ուղղած հրաւերի
մասին: Տարաբախտաբար ինչ ինչ պատճառ-
ներով անձամբ ճերկայ լինելու ուրախու-
թիւնն ունենալ կարող չեմք, բայց մեր կող-
մից ուղարկում ենք Գեորգ Տ. Խաղ Արքեպիս-
կոպոսին, իբրեւ ճերկայացուցիչ մեր անձի,
Կաթողիկոսարանի եւ Միաբանութեան:

Յայտնելով մեր ուրախութիւնը Ձեր գա-
հակալութեան առթիւ, ի սրտէ մաղրում ենք
որ Ձեր Ամենապատուութեան Պատրիարքու-
թիւնը լինի ըստ ամենայնի՝ քախտաւոր եւ
արդիւնաւոր Ս. Յակոբեանց հիմաւուրց Ա-
թոռի համար: Սրուսաղէմի Պատրիարքական
Աթոռը Հայաստանեայց Եկեղեցու նուիրա-
կան Աթոռներից մէկն է, որ իւր կրօնական-
եկեղեցական եւ մշակութային դերն է կա-
տարել մեր եկեղեցու երկար պատմութեան
մէջ, վառ պահելով եւ բուրգոնելով կրօնա-
կան զգացմունքն ու ցեղեմեանդութիւնը հայ
ուխտաստութեան մէջ, պահելով բարոյական
ու կենդանի կապ հանուն հայրութեան ամեն
կազմութիւ հետ, որեւէից գալիս որ ուխտաւո-
րաւրէնք:

Բայց նա մեր պարծանքն է նաեւ իբրեւ
ճերկայացուցիչը Հայաստանեայց Եկեղեցու
համայն քրիստոնէութեան առաջ՝ Ս. Վայրե-
նում, իւր Միաբանութեան անձնուէր աւ-
խասութեամբ եւ արքուն պանդանութեամբ
մեր իրաւունքների այդ սրբազան կեդրոնի
մէջ:

Նա մեր պարծանքն է նաեւ իւր եկեղե-
ցական եւ մշակութային գանձերով, հարուստ
ձեռագրատան եւ հնութեանց հաւատարիմ
պահպանութեամբ եւ նոյն մասնագաւառնի
կազմութեամբ:

Մենք պատրաստ ենք եղբայրական աջակ-
ցութեամբ մեր հնարաւորը ի մէջ բերել,
մեր երկու Աթոռների, ինչպէս եւ Էջմիածնի
Մայր Աթոռի, պայծառութեան համար, ի
տան ընդհանուր Հայաստանեայց Առաքելա-
կան Եկեղեցույ:

Ներայայտարար եմ հաւատարմելով Ձեր գահա-
կալութիւնը, Աստուծոյ օգնութիւնն ենք մաղ-

թում Ձեր ծանր կոչման եւ պարտականու-
թիւնների կատարման մէջ:

Ներայայտարար եմ

ԳԱՐԵԳԻՆ ԿԱՌՈՂԻԿՈՍ

ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՅ

*Նամակի ընթերցումէն ետք, Լուսարա-
բապետ Հայրը, ի զիմաց Ս. Աթոռոյ Միա-
բանութեան, կ'ընէ հետեւեալ ուղերձը, իւ-
րեւ շնորհաւորական խօսք Նորին Ամենա-
պատուութեան:*

Ամեն. Մերազան Պատրիարք Հայր,

Ըրիվ Ձեր Ուխտը, Գահակալն էք դարա-
ւոր այս Աթոռին: Ինչպէս որ գաղաքներու
վրայ կը գաղտնի կ'ենանք սովորական օրեմե-
ները եւ ձնուկը կ'առնեն անցուցակելի, ինչ-
պէս անսպասելի ծագնաւներ, այնպէս ալ
դարաւոր այս Աթոռին բարձունքին վրայ
Ձեզի կը սպասեն ծանր ու մեծ պարտքեր եւ
իրադրոծումներ:

Ձեր ուխտին մէջ դուք եղևնցա՛վ Ազգին
կողմէն Աթոռին վստահուած իրաւունքներուն
լիակատար պատասխանութիւնը, մեր Միաբա-
նութեան բազմազան կարիքներուն անքերի
լանձանձնուր, դարեւ մը ի վեր սկսած, եւ
հաւորդ դարեւ ի վեր նոր բափ առած,
կրթական, իմացական եւ ցրական աւխտասնե-
ներաւ բեղմնաւորումը: Սրուսաղէմի Աթոռը
առաւել էան անուն մըն է: Մեծ եւ սիրելի
անուններ Ձեզմէ առաջ այդ սպասին մէջ
արդարացուցած են ինքզինքնին, որ այսօր
այնքան թիրական օտպոլականութեամբ մեզ
բոլորս առած է իր ծագման մէջ: Բայց
Հայաստանեայց Եկեղեցին չի կրնար մեռնիլ,
եւ անոր կեանքին վառարանը, չըսելու հա-
մար արգանդը, Սրուսաղէմն է, որուն ուղ-
ղուած են բոլոր ճայուածները իփրեւոր
Հայաստանեայց Եկեղեցույ հարիւրաւոր Մար-
միններաւ:

Ազգը մեզ կանուխեն ի վեր կ'որակէ զին-
ուորեաց Միաբանութիւն, անուուստ ակնա-
կելով Ս. Տեղեաց վրայ մեր դարաւոր իրա-
ւունքներու պատասխանութեան: Ի վերջոյ ա-
մեն Ներայայտարար Միաբան երբ կ'առնէ վե-
ղարը իր գլխին՝ գիտէ քե իր պարտքերուն
գերադասին է ազգային այդ իրաւունքն ամեն
գինով պատասխանելը: Վստահ ենք քե Ձեզ
Ամենապատուութիւնը այս զգացումը պիտի
պահէ իր լիութեան եւ ուժին մէջ, աստի-

նան մը աւելի, անոր մէջ զննելով արդի պայմաններու պահանջած, խելք, նկունութիւն, եւ թեք պէտք ըլլալ կիրք: Ոչ մէկ նահանջ Ս. Տեղեաց մեր իրաւունքներէն. այս ալ մեր ուխտը:

Տրտուել եւ խորունկ դէպքեր, ապիւնալու ասեմ շունեցող վերեր, իրաւ եւ թեք մեր Միաբանութիւնը կ'ընեն ինչ մը յուզուած:

Կեանքին բաժինն է օգնութիւն, ալիքները զաւակն են ծովուն, բայց խաղաղութիւնը մայրն է դարձեալ այդ ծովերուն: Ձերք Ամենապատուութիւնը կանչուած է ըլլալու բարձր գործաւորը այդ խաղաղութեան, վերածելու իր Արողը հայրենի օճախի մը օրհորեան, բանալու համար իր սիրտը բարի հօր մը պէս այս Արողի բոլոր զաւակներէն:

Հոս եղողներէն ասեմ կը յիշեն թեք երկու օտանակ օտարներ առաջ, Կիրեղ Աբեղան արթի եւ հոգիի ինչ բարձրութիւն եր եւ նաւագայթ, երբ իր երթաւորութեան կազմոյրը եւ եղբայրական սերը կը մասնուակէր Արաւոտեան որբանոցի բախտաւորութիւնը՝ մասնաւորաբար եւ հայրենագուրի մեր ժողովուրդի զաւակներուն՝ ընդհանրապէս:

Թեք Կիրեղ Վրդ. ինչ խմամասար եղբայր եղաւ Ժառ. Վարժարանի իր Փոխ-Տեսչութեան եւ Տեսչութեան, երբ իր խմամբներով, յոգնեցնելու չափ, կ'ողողեր զնոյն:

Իր Լուսարարագետութեան, այդ համակրանքը Արողի հարազատներու նկատմամբ եւ անօտարանկողի սերը Արողոյ վերաբերմամբ, քաղցրագին բայց տրտուել համբերութեան վերաբերմամբ, օգնութեան հետ օտարութիւն աստիճան: Կը հաւատարմ Սրբազան Պատրիարք Հայր, թեք այս բոլորը աւելի լրջացած եւ ազնուացած կ'ապրին ձեր մէջ, վանդի դուր իբրեւ զաւակը այս Արողին, Միաբանութեան կապուած էր ընտանեկան զգացումներով:

Կը հաւատարմ թեք մեծածններ, զգացումներ եւ երազներ որոնք ձեզ առաջնորդեցին Արողին, իրենց բովանդակ գործութիւնն ու նմայր կը պահեն ձեր արթին վրայ: Կը հաւատարմ թեք Արողը ոչ միայն գիտակցի եւ մաքարի Հովուականութիւնը մը ձեռնին մէջ է, այլ մանաւանդ ընդունակ եւ արդիական գործիչի մը:

Ձեզի կը մտաբերմ կարողութիւն յանուն Միաբանութեան, ու կը բերեմ Ձեր մօտ ու հեռու բոլոր զաւակներուն ամենաստեղծ:

վերաբերումը Ձեր կողմէն զալիք բոլոր թելադրանքներուն եւ հրամաններուն: Ձեզի հետ ենք եւ Ձեր տրամադրութեան ներքեւ, ինչպէս մեր սիրտով՝ այնպէս ալ մեր կամներով:

Թող մեր հաւատքը անբաժնուած է ծաղկեալ ընծայէ Տերը, իր անսահման աղբիւրներէն հեղիւղ Ձերդ մօտին՝ Իր լոյսը, Ձեր արթին՝ Իր ուժը, եւ կամքին Իր արգար պողպատը: Սրբանիկ օրեր Ձեզի, եւ ուրախութիւնը՝ Ձեր բարի ջանքերուն պարգեւները վայելելու:

Ուղերձէն ետք, Ժառանգաւոր սաներ կ'երգեն Ն. Դուրեանի «Խաղը» քերթուածը՝ զաշնաւորուած Պր. Շ. Ռ. Պէրպէրեանէն՝ Ապա՝ Գեորգ. Տ. Սարգսեան. Աշխատանք, յանուն Նորին Ս. Օծուծին Կիրիլիոյ Կաթողիկոսի եւ Իր Միաբանութեան, կը կարգալ չետեսեալ ուղերձը:

Ամենապատու Սրբազան Տեր,

Կը խորհիմ թեք օակաւին բարձր եւ ձեր յիշողութեան մէջ այն պարագան, որ ինձ վիճակուած եր ներկայ գտնուի Ձեր նախորդին, երջանկայիշտակ Մեսրոպ Սրբազան Պատրիարքի քաղման փառաւոր արարողութեան, եւ այդ օխտը առթիւ ալ, յայտնելու մեր եւ Կիրիլեան Միաբանութեան ցաւակցութիւնները Սրբոց Յակոբեանց Ուխտին: Ձեր Ամենապատու Սրբազանութեան գանակալութեան հանդիսութեանց առթիւ ալ կ'ըլլին ինձ կը վիճակի յանուն Սուրբ Օծուծին Կիրիլիոյ Վեն. Կաթողիկոսին եւ Ս. Արողոյ Միաբանութեան, ինչպէս նաեւ յանուն Լիբանանի, Սիրիոյ եւ Կիպրոսի մօտ 170 հազար մեծ ժողովուրդին, յայտնելու մեր արագին շնորհաւորութիւնները եւ արագեղ բարեմաղթութիւնները:

Ամենապատու Սրբազան, Կիրիլիոյ եւ Նուրաղիմի զոյգ Արողներուն միջեւ ի վաղուց անձի հաստատուած եղբայրական այնքան անկեղծ եւ սիրալիք յարաբերութիւնները, իբրեւ արդիւնք փոխադարձ հասկացողութեան, աւելի սերացած ու ամրացուած էին տարազոյցութեան վերջին օրացմին: Քաղաքական դժբախտ պարագաներու բերումով, Սիւս մայրաքաղաքին տեղահան եղած Շնորհալիներու պատմական Արողը երբ օակաւին մօտ կը հաստատուէր Լիբանանի մէկ ծովափին վրայ, Անթիլիաս, Ձեր նախորդներէն:

մեծանուն Դուռեան Պատրիարքի եւ ծերունազարդ Սահակ Վեհ. Կաթողիկոսի միջեւ զոյացած համաձայնութեան վրայ, Սուրիոյ եւ Էփրատեան Մրուսաղիսապետական եկեղեցիներուն եւ ասոց յարակից տեսչական եւ կրթական տեմերուն փոխանցումը Կիրիկիոյ Աթոռին, մեծապէս կը դիւրացնէր Կաթողիկոսաւորանիս բնական կազմակերպութեան կարեւորագոյն գործը:

Ձեզ Ամեն. Մրազմուրիներ որ այսօր կը բազմի Մրքոց-Յակոբեանց Առաքելական Աթոռին վրայ, վստահ եմք թէ հետեւելով իր նախնեաց օրհնակին, աւելի ամուր եւ անխափելի պիտի պահէ երկու Աթոռներուն մէջ վաղուց հաստատուած բարեկամական սիրալիր կապը:

Քաջամանօք է մեզ Ս. Աթոռոյ դիրքին ու վարկին բարձրացման եւ Տնօրինական Սըրբավայրերու իրաւանց պատշաճութեան համար, Ձեր Ամենապատիւ Մրազմուրեան ունեցած նախանշխարհի ոգին: Սուր Աթոռոյ ժառանգաւորաց վարժարանէն ներս տարիներու ընթացքին Ձեր վարժած բարձր ու օգտաւոր պատեօնավարութիւնը, մանաւանդ Ձեր Լուսարարապետութեան աջման ծանր ուսպատասխանատու պատճենին մէջ յայտնաբերած տեսնեցողութեան ոգին ու Մրքավայրեան լքանքազոյութեան ու բարեկարգութեան համար բոլորապէս Ձեզ ջանքերը, իրաւամբ արժանի բրին Ձեզ բազմելու Մրքոց Յակոբեանց պանծալի Աթոռին վրայ: Լիալոյն եմք որ Ձեզ Ամեն. Մրազմուրիներ խորապէս գիտակ առաքելական իր բարձր պատճենի բնոյթին եւ տարողութեան, առաջնորդ ունենալով իրեն իմաստութեան ու խոհանքութեան աստուածային ոգին, առաւել եւս իմաստասար ու հոգածու պիտի ըլլայ Մրուսաղիսէն ներս, երանաւորօրէն նախնիներէն արեւմտեց մնացած ազգապարճանք հաստատութիւններու անկար պահպանման, Ս. Աթոռոյ Միաբանութեան մէջ խաղաղ ու անդորր կեանքի զարգացման, ինչպէս նաեւ կոստանեկեղեցական, կրթական եւ վարչական գործոց բարձր ընթացքին եւ յաւաքդիրութեան:

Ամեն. Պատրիարք Մրքազան, խօսքս վերջացնելի առաջ ի բոլոր սրեք կը մաղթեմ Ձեր Ամենապատիւ Մրազմուրեան ուժ ու կայրաւորութիւն. Տեք զօրացնէ զՁեզ Աստուածային Աշտուկ, կարեւոր անելու համար ծանր այն

բեռը՝ զոր յօժարական առանձնեցիք ի պայծառութիւն եւ ի շինութիւն այս մեծ ճան: Ձերմօտէն կ'աղօթուի որ Ամենակարողն Աստուած յանձնար ու անգատան պահէ Հայաստանեայց Առաքելական Ս. Սկեղեցին եւ Յուրազեցական Աթոռները Ս. Էջմիածնայ, Կիրիկիոյ, Մրուսաղիսի եւ Կ. Պոլսոյ, ի միաբարութիւն եւ ի հոգեւոր շինութիւն բազմաշարար Ազգիս Հայոց:

Գերշ. Խաչ Սրբազանէն հոգ խօսք կ'առնէ Յղիպտոսի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մամբրէ Արքեպօ, Սիրուհեան եւ յանուն իր թեմի բոլոր կաթողիկոսութեանց, պաշտօնական մարմիններու եւ հաւատացեալ ժողովրդեան կը շնորհաւորէ Ս. Աթոռոյ Գահակալն եւ իր Միաբանութիւնը, եւ կը մաղթէ կարողութիւն եւ երկար կեանք, տանելու համար՝ այս նուիրակաւ Հաստատութիւնը իր ճակատագրին, ինչ որ ամենէն արդիւնաւոր ծառայութիւնը եղած պիտի ըլլայ մեր ազգին, որ իր ծով պէտքերուն ու կարիքներուն մէջ յաճախ նայած է որ կը նայի այսօր ալ այս Աթոռին եւ անոր Գահակալին:

Ս. Աթոռոյ Սրբազան Կիրեբէն՝ Գերշ. Տ. Ռուբէն Արքեպօ. Մանասեան, անհանգստութեան պատճառաւ կը շարունակէ իր քաղաքի սոյն հանգէտէն եւ զրուար տալ շնորհաւորական իր խօսքը, զոր կը ներկայացնենք հոս:

Ամենապատիւ Տեք,

Այսօր, Ձեր Մրազմուրեան պատրիարքական զանակալութեան այս առաջին համադիրութեան մէջ, կը զգացուի խորապէս, որպէս Հայ եկեղեցուն սպասաւոր եւ Սուր էջմիածնի Միաբան:

Գեւ. տարին չէ անցած երբ մեր եկեղեցու երեք Աթոռները թափուր էին եւ այս պատգամաւ խորութիւնը կը պատշաճ տեսնուէր, սակայն ստուածային տնօրինութեամբ Ս. Էջմիածնի Ընդհանրական եւ Կիրիկիոյ Կաթողիկոսական Աթոռները ունեցան իրենց արժանաւոր գաղափարները:

Այսօր ունեցաւ նաեւ Մրուսաղիսայ Ս. Աթոռը իր գաղափար՝ յանձն Ձեր Ամենապատեմութեան, որի համար իմ խնդակցութիւնս եւ տնօրինութեանս կը մասնագա-

ենմ Ձեր Մերազնություն, եւ Ս. Աւիսի ամբողջ Միաբանութեան:

Ներքե ամեն անգամ Ս. Արքու կուգամ ուխտի, Պաղատի Հայ հաւատացեալների հետ, որոյն հոգեւորական միութեամբ կը զգամ ինզիրմեա եւ տալեա հայ հպատակ մեծ ունեցած իրաւունքների եւ կրօնական ծեսերի պահպանումը սենսելով:

Այս իրաւունքները ձեռք են բերուել մեր նախնի պատրիարքների եւ Միաբանութեան անխնայ ջանքերի, անծնագոհութեան եւ հայ ժողովուրդի ամուր հաւատքի շնորհիւ:

Դուք թաւառնակողն եք եւ պատգամներ երջանկայիտեացի անձնազոհ պատրիարքների գանի եւ պահապանը մեծ իրաւունքների:

Դուք՝ տալեա հաւատացեալ զանազակ այս Ս. Արքունիք մեր փորձառութեամբ եւ լրջութեամբ վստահ ենք թէ աւելի եւս պիտի յառաջդիմեա եւ զարգանայ առ Ս. Արքունիք:

Անցեալ տարիների ընթացում վանքում պատահած անխնայ եւ շատ դիտաւորութեամբ կատարուած առաքելների ժամանակ, Ձերդ Ամենապատուութիւնը ըստ կարելիք լուրջ Արքունի պատիւը ու անունը աւ իրաւունքները բարձր պահելու:

Այստեղան Ձերդ Ամենապատուութեան Դաւանակութեամբ աւելի եւ աւրաստմէի եւ եռանդի ապարհեղ թ բացուած Ձեռք տուալ, գիտեմ թէ որքան ծանր եւ այդ բեռը որ պիտի տանիք եւ հաւաքուած եմ թէ պիտի տանիք, որովհետեւ ունիք դուք Ձեռք տուալը եւ Ձեռք Պատրիարեական Արքունի ճախրուած գիտալիք, եռանդուն Միաբանութիւն մը, որ պատիւ ե բերած ոչ միայն Ս. Արքունիք, այլ եւ հայ հաւատացեալ ժողովրդին:

Ուստի կը շնորհակալեմք Ձերդ Ամենապատուութիւն եւ կը բարեմտութեմ ուժ եւ կատարութիւն Ձերդ եւ Ս. Արքունի Միաբանութեան:

ՌՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍ. ՄԱՆԱՍԵՐ

»

Հ. Ն. Մ. ի երգչախումբի կողմէ քառաձայն երգուած «Ո՛վ մեծասքանչ» երգէն ետք, խօսքը կը տրուի գաղութիս մեծայարդ ազգայիններէն Տէր. Կալպիտին, որ ի դիմաց Պաղատիների եւ Անդր-Յորդանների Հայ հասարակութեան կը կարդայ հետեւեալը:

Ամենապատիւ Պատրիարք Մերազն Հայր,

Այս հանդիսաւոր պահումը, երբ Սարգիս Յակոբեանց պապիւրգանին անուառը կը վերանայ, առժամանակեալ հարգանքով զանազակ պատգամներ տալով, յանուն Պաղատիների եւ Անդր-Յորդանների Հայ ժողովրդին, հանդիման ու պատիւը տնիւմ մեծ ժողովուրդին սիրտը ողորդող հոգեւանքի եւ զոհականութեան բարեպետը ըլլալ, մեր համայնքի առաջնութիւնը բերելու եւ խառնելու Միաբանութեան բեռեւանքին, եւ Ս. Արքունի պայծառութեան ստատուի մեր բարեմտութիւնները միացնելու Հայ եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդի ստի ժողովուրդներուն:

Ամենապատիւ Մերազն Հայր, այս պատգամով թալեկին թալ տուիք ինձ ըլլալ անվերապան եւ անկեղծ, երբ նոյն իսկ տալու տրտիւններս եւ համոզումներս առաջադրելու նիւստ Ձեր Մերազնութեան համոզութեանը վերաւորեմ:

Ճանչցած եմ Ձեզ, մօտ հաւատք դառնի վեր. Ձեռք մեզ տեսած էի միտք, աւանդական եւ ամբասիր հայ վանականը, բայց վերջին երկու տարիներու ընթացին, երբ Ս. Արքունիք միաբանութեանը կ'անցնէր փառքալուրդ տրտեմ մը, եւ երբ զեպելու եւ տրտեմեալ հաւանայական պահանջներ բերումով, Կալպիտ, բայց տես մօտեմ տկանաւոր կ'ըլլայի այդ տոնրու տալուպին, Ձեռք տնիւմ հաւատարմութիւն ինձ համար մօտ շայնուրքին մը եղաւ. եւ եւ վերջիւսցի այն համաձայնութիւնը թէ վստակի եւ հոգեւորական իրաւունքներուն եւ խառնակապեալ որ ի յայտ կուգան իրական առժամանակներ:

Այդ տրտում տեսուած եւ Ձեռք մեզ տեսող ոչ միայն ամբասիր եւ աւանդական հայ եւ կեղեցականը, այլ մանաւանդ նմանութիւն հաւանութեան եւ տրտակում վարդապետը, տնիւմ տալու, երտողալ եւ վերահան իրաւունքներ, հաղ թէ ազգանուր հայր, եւ հեռաւոր ու անվերջ լիակտմը: Այս բաւեար պատգամով եւ հաւատարմութեան հաւատն ըստ տեսած բաւեալ չեն, այլ իմ խոնարհ առաջադրութեանը միայն ձեռք առժամանակին զոք կը պահեմ իմ մեզս եւ հաւատարմութիւն թէ Ձեռք Պատրիարեական Դաւանքաւորութեանը միտք Արքունի ոչ միայն պիտի վերաբեմ իր նախկին փառքը, այլ տնիւմալով Ձեզի նման

անձնուէր պէս մը, պատմական այս Արոտին, զայն պիտի առաջնորդէ սահմանուած իր նախասագրին:

Ներկայիս, այս աշխարհուէր պատերազմի վերջաւորութեան եւ խաղաղութեան վաղորդայնին՝ երբ ազգեր տուարած, վերաւոր եւ ուժարափ՝ իրենց վերերը դարմանելու ջանքեր կ'ընեն, Հայ ժողովուրդը եւ Հայ եկեղեցին կ'ապրին պատմական բախտորոշօրէն, եւ այս Հաստատութեան վրայ կը ծանրանան լուրջ եւ սեփական պատրաստակարարութեան Հայ եկեղեցւոյ վերածնունդի եւ Հայ ազգին վերականգնումի գործին մէջ. նոր եւ նուիրուած եկեղեցականներու պէտք կայ, պէտք ունինք կղերականներու որոնք իրենց պատրաստութեանց համար գոհուելու պատրաստ ըլլան, կղերականներու՝ որոնք նուիրուիլ գիտնան հայ գրականութեան, հայ բանասիրութեան եւ նուազեմի Ս. Տեղեաց մէջ մեր ազգային իրաւունքներու պաշտպանութեան:

Միխրաբական է որ Դուք Ձեր տուրքը ունիք, ժաշան, կարող, ազգանուէր եւ քրիստաւոր ուժեր. որքան կը սահմանափակ ըլլայ անոնց թիւը, մենք կը հաւատանք թէ անխնայ եւ միաբան ջանքերով այս Հաստատութեան վրայ դրուած յոյսերը լիովին պիտի իրականանան: Հայ ազգը տաս բան կը պարտի Հայ կղերին, որ գոնեւով անձնական ամեն հաճոյք եւ նոյն իսկ բարօրութիւն, քրիստոնէականութիւն նուիրուով իր կեանքը ի սպաս դրած է ազգին: Հայ եկեղեցականը մեր պատմութեան աղբաղջային եւ դժբախտօրէնքն իսկ՝ Լուսաւորչի կանքերը վառ պահած է եւ լոյս եւ յոյս սփռած իր տուրք: Հայ կրօնաւորը խաչը ձեռին մեր արքաներու եւ իշխաններու կողքին՝ մեզ առաջնորդած է պատերազմի եւ խաղաղութեան միաժամանակ, իսկ մեր ազգային անխախտութեան կորուստէն վերջ՝ մեր միակ առաջնորդը հանգիստացած է: Հայ ժողովուրդը խորապէս գիտակից է այս իրողութեան, անոր համար մինչեւ այսօր Հայ եկեղեցականը բացառիկ պատուոյ, յարգանքի, գուրգուրանքի առարկան է իր սիրոյն: Հայ ազգին միահամուռ բաղձանքն եւ արգար պահանջն է որ նախանշախնդրութիւն ցոյց տուի այդ սեմին հանդէպ, զայն կ'երեւն պատիւր ունեցողներու կողմէ:

Պաղեսիմահայ գաղութը, որուն անմի-

ջական հոգատարն է Ս. Արոտը, ճանապարհի վիճակի չէ եղած իրեն ուրոյն վարժարանները ունենալու. մօտ մէկ դար է այդ նուիրական պատրաստութիւնը Սուրբ Յակոբայ Միաբանութիւնն է ստանձնած եւ մեր մանուկներուն տուած հայեցի՝ դաստիարակութիւն. մասնաւոր հպարտութիւն մը գրացի երբ Հայաստանէն վերագարձող Ամերիկահայ պատգամաւորներէն մին, զարմանով, բայց սրտի լայն գոհունակութեամբ մը ինձ կ'ըսէր թէ իրեն համար հանելի անակնկալ մըն էր տեսնել այսօրու ստուարաթիւ ազգայնէր հայ երիտասարդներ, որոնք մաքուր հայերէն կը խօսին եւ որոնք հայ գրականութեան եւ ազգային պատմութեան լուսասեղեակ են, երեւոյք մը որ Ամերիկայի մէջ դժբախտաբար գոյութիւն չունի, եւ ով կ'ընայ ուրանալ այն մեծ դերը որ Սրբոց Յարգմանչաց Վարժարանը ունեցեր է այս յուսադրիչ իրականութեան մէջ: Սակայն աշխարհի հսկայախալը կը յառաջդիմէ, ուսուցումի եւ զարգացումի բազմաթիւ պէտքեր օր ըստ օրէ անելի կը տեսնուին, մասնաւորապէս մեզի պէս փոքրաթիւ ժողովուրդի մը համար, որ գէթ որակով գերազանց պէտք է ըլլայ: Վստահ ենք որ Ձերոյ Սրբազնութիւնը հոգածու պիտի ըլլայ Պաղեսիին հայ դպրոցներու կրթական մակարդակի բարձրացումին, զօրացնելով ուսուցչական կազմին բանակն ու որակը, բնծայելով վարժարանին նոյնպէս առողջապահիկ պայմաններ, որոնց դերը նոյնքան բարեբար է դաստիարակութեան գործին մէջ:

Դժուար է այս խօսքերը վերջացնել առանց կրկին անդրադառնալու ներքին հրահանգին եւ հոգեկան ուրախութեան, որ այս պահուն կը լեցնէ մեր սիրտերը: Կը սկսինք նոր օրջան մը՝ բարեւ թաւադրութիւններով տոգորուած եւ փայլուն ապագայի մը հեռանկարով ոգեւորուած: Ձեր Սրբազնութեան անձը մեզ կը ներշնչէ անխախտ այն հաւատքի՝ թէ մօտիկ ապագան պիտի ըլլայ սկիզբը Ս. Արոտոյ փայլուն օրջաններէն մէկուն:

Յուսալից եւ գոհունակ, յանուն Պաղեսիին եւ Անդր-Յորդանանի Հայ գաղութին՝ անգամ մը եւս կը ընդհանուրեմ Ձեր Սրբազնութիւնը, մաղթելով յաջողութիւն եւ երկար կեանք, եւ կը վստահեցնեմ Ձեզ որ Հայ ժողովուրդին բոլոր խաւերը անխախտ, Ձեր ազգօգուտ գործունէութեանց մէջ իրենց

ոչ պայմանաւոր ժամդրակութիւնը լիովին պատասխան եմ դնելու Ձեր օրամատուցեանը տակ:

Կեցցե՛ք մեր նորընթիւր Ամեն. Տ. Կիւրեղ Պատրիարքը:

ՅՕԳԹ. Վ. Յ. ԴԱՆՊԵՏԱՆ

Ապա Ժառանգաւորաց Վարժարանի Ընծայարանի աշակերտներէն Տրց. Մանուկ Սթարտեան ի դիմաց իր դասընկերներուն և Ժառանգաւոր սաներուն կը կարգայ հետեւեալ ուղերձը:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Մերոց Յակոբեանց Միաբանութեան Գանձին վրայ Ձեր բազմեղուն այս հանդիսաւոր պառնուն՝ օտք եւ Ձեզի ալ ընտանի զգացումներ կ'ուղղեն Ձեր բոլոր զուակները՝ Ձեր անձին: Զգացումներ՝ բոլորն ալ անցած հրեմբռանքի եւ վստահութեան պրիսմայէն:

Հրեմբռանքի մէջ է Միաբանութիւնը՝ Ձեզմով շահած բլլալու գիտակցութեամբ՝ յաջորդ մը՝ Հոգեւոր Մեսրոպ Սրբազան Պատրիարքի. Ժառանգող մը՝ Մերոց Յակոբեանց հնաւանդ Արտիւն. ու առաջնորդ մը եւ հայր մը միտաժամանակ՝ բոլոր վարդապետ հայրերուն:

Հրեմբռանքի մէջ է Ազգը՝ իր Պատրիարքը ողջունելու:

Ու հրեմբռանքի մէջ է աւելի՝ Ձեր Դպրոցը, Ժառանգաւորաց Վարժարանը: Անձանօք չէ մեզի Ձեր համբան՝ մինչեւ հոս հասնելու, եւ ասով իսկ՝ է՝ աւելի ընտանի: Դպրութեան՝ Տեսչութիւն, ապա՝ Լուսարարապետութիւն. ու այսօր՝ այն սիրելի Գանձը՝ որուն փառքին անխնայ մեակը եղաւ անոր նուիրուելու Ձեր առաջին վայրկեանէն: Բազմազան աշխատանքներ՝ որոնցմէ մէկը, երկունքը արգէն բաւ պիտի ըլլային լեցնելու մարդու մը կենսոյնը:

Ձեր գործին գնահատականը չէ որ կը փորձենք ընել: Ասիկա կ'ընեն՝ աւելի հանգամանաւոր մարդեր: Բայց կը նայինք Ձեր ճամբուն՝ հասնելալի ուղղումով, քանի որ մեր ալ համբան է ասիկա:

Ու, Ձեր Գան բարձրանալը՝ առիթ մըն է որ մեր մէջ անգամ մըն ալ ուժգնօրէն քաւմանաւ հաղթը եւ ծանր երազներ...

Թէ այսօրուրէն, երբ այս Հաստատութեան փէկը կը յանձնուի Ձերդ Ամենապատուու-

րեան, ի՞նչ կ'ուզէ Ձեզմէ Միաբանութիւնը՝ ասիկա կ'ընեն մեծերը:

Թէ ի՞նչ կը սպասէ Ազգը՝ ասիկա բաժնն է Ազգին:

Բայց, ուրախ է մանաւանդ, ըսի, Ժառանգաւորացը՝ որովհետեւ իրեն համար ա՛յլ թէ Պատրիարք մը, այլ Հայր մըն է որ կը բազմի մեր Գանին վրայ:

Այս հանդիսաւոր եւ պատօճակաւ պառնուն՝ Ձեր հայրական զգացումներէն հաշտութեամբ՝ կը համարձակինք յայտնել մեր աւելի մեծերի քան թէ պատօճակաւ զգացումները, տեսնելով Ձեր մէջ Հայրը եւ հռանդուն ուսուցիչը:

Ասիկա երբ կ'ըսենք, անուշտ, ինչպէս Դու՛ք նոյնպէս եւ մենք՝ կ'անցնենք մեր մրտէքէն բոլոր այն Ձեր երիտասարդ եւ աշխատանքով լի տարիները՝ զորս զոհեցիք Ձեզի սիրելի, Ձեր Վարժարանի կամարներուն ներքեւ:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր, կը հաւատամք, ու կը սնուցանենք յոյսը՝ մեր մէջ, թէ այդ եղանակն ու անձնութիւնը Ժառանգաւորացին համար՝ ոչ ի՛նչ կ'ըցած է նուազեցնել, ու մանաւանդ պիտի չնուազեցնեն Ձեր մէջ: Այլ, կը յուսանք որ աւելի՛ արդիւնաւոր ձեռքով մը պիտի անցնէ արժարձունք մեր բոլորիս վրայ, այս անգամ՝ Մերոց Յակոբեանց Պատրիարքալան Գանին:

Կը մաղթենք Ձերդ Ամենապատուութեան ծաղկալից եւ պոյնտից երկար կեանք մը. եւ կը տոնաւորենք Ձեր Գանակալութիւնը, համբուրելով Ձերդ Ամենապատուութեան Հայրական Ս. Աջը:

ՅԻՐԱՅՈՒ ՄԱՆՈՒԿ

Տիրացու Մանուկէն հոգ, խօսք կ'առնէ Պր. Ա. Կարապետեան, և յանուն Հայ երիտասարդաց Միութեան Պաշտօնի երեք Մասնաճիւղերուն, կը կարգայ հետեւեալ ուղերձը:

Ամենապատու Սրբազան Հայր,

Անհուն հաճոյքով է որ կ'ողջունենք այս վայրկեանը, ուր ինձի առիթը կը տուի բերելու Ձերդ Սրբազնութեան յանուն Պաշտօնի Հայ Երիտասարդաց Միութեան երեք Մասնաճիւղերու, անգամ-անգամահիմներու երիտասարդական անկեղծ ու սիրոյ տոնաւորութիւնները, Մերոց Յակոբեանց Միա-

բաժնուրեւան անասան զանհին արժանի ժառանգորդը լինելուդ համառ:

Մենք, Սօբոց Յակոբեանց Միաբանութեան երախտագրաց մնացած ենք շարունակ, մեզի մատուցած ընտանեկան, համար եւ տախտակն ուրախ երախտագրաց պիտի մնա իննք ինք կարողանայինք մեծ երեսասարգում կան ուժերն ու զգացումները գոյով չափով նուիրել զարեւոտ մէջն անցնող ու ապրող այս Հաստատութեան վերելքին:

Մենք չենք մոռցած այն հայտական զուգորդանքներն ու պատգամաւորւնները, որ Ձեռք Մրբագնութիւնը խնամակալ հօր մը ոչեւ իր ձեռները մեր վրայ երկաթած կը պատահանէր մեզ ամեն միջոցներով, եւ ինչպէ՞ս կ'ենայինք մոռնալ այդ ամենը երբ մեր մանկական օրերը ամբողջովին անցուցինք Ձեզի հետ: Ձեր ժառանգով ապրեցանք ու զարգացանք:

Ամեն Մրբագն Հայր, ներկայ խորհրդաւոր վարկեանքներ վկայ րլլան մեր այս անկեղծ զգացումներուն, թէ Հայ Միջատաւորաց Միութիւնը միտք Ձեռք Մրբագնութեան եղբորդ վարժարանը պիտի կոչուի՝ երբ չպակսի Ձեռք Ամեն Բարձր նուիրելիք մեր վրային, որուն համար ուրիշ բան չունինք Ձեզի ընծայելու բայց միայն մեծ պայծառ տեսելու մարքանքներուն հետ, խնդրել Ամեն նակարեւն որ տառնէ Ձեռք Մրբագնութեան վրայ իր ամենագոր բազուկը, պանն ու պան պանն Սոսր Արուր ու անոր հաւատարիմ Միաբանութիւնը, պարգեւեղով Ձեզի արեւ, տառութիւն, կարողութիւն ու յաջողութիւն:

Հուսկ օրեմէն փոսք կ'առնէ Ամեն Ս. Պատրիարք Հայրը:

Խորունկ եւ ծանր զգացումներու տակ նրան տուած կը զգամ ինքզինքն այս վարկեանքին:

Մեծ անկախութիւններ, հրաշալի բողոքներ, ծանր պարտքեր, լիակատար արդիւններ, բազմազան կարիքներու յանձնումն ու իրագործումը, իրենց բոլոր դժուարութիւններովն ու պահանջներովը միացած կապեցինք մի հսկայ բողոք, որուն տակ ոչ եւ ոչ ալ իննքի պէս տառեր պիտի կրնան տակալ:

Բայց ուրայ եւ ուր այդ բողոքը պիտի Մ. Արուր մեզ կառուցուեցաւ, վասնզի այդ իսկ կը վկայէ թէ Հայ ժողովուրդը ինչ մեծ հաւատք եւ յոյս կը տնուցանէ հանգիստ ին

նկեղեցիին, հանդէպ այս Արուրին եւ անոր Միաբանութեան: Թող այն մնայ հոս կանգուն իբրեւ այդ հաւատքի եւ յոյսի մտնչեւ նական յուսարարներէն մին, մեր Արուր եւ անոր զուակները միշտու դէպի շինարար եւ տեսչական աշխատանք:

— Այդ բուրդին ծանր նմաններէն դուրս գալով կը դառնամ զայն կառուցանողներէն առաջինին՝ Գրե. Հայր Յիլիէին, յայտնելով իմ սրտային շնորհակալութիւններս եւ անկեղծ զգացումներս: Ունկնդրեցի ուրիշ ուրիշ իր ուղերձը, վասնզի, ան կը խօսէր այն Միաբանութեան կողմէ՝ որուն վրայ կառուցած եմ եւ ալ իմ անկախութիւններու բողոքը: Եւ կը փափայիմ հաւատալ, թէ այդ անկախութիւնները պիտի կրնան իրականանալ, եւ վրասն եմ թէ պիտի իրաւականան, երբ ինք, եւ իրեն նման Միաբաններ՝ առակներս ըլլալով մեծամուն ու սուղիշխեալ՝ հետեւելով մեծամուն նախնիներուն, պատրաստ ըլլան աշխատելու իբրեւ զինուորեալ Միաբանութիւն:

Պէտք է ըսնմ թէ այդ վստահութիւնն է որ իննքի հաշտութիւն տուաւ ելլելու հոս, այս պարտականութեան զրախը: Նս գիտեմ եւ կը գնահատեմ իւրաքանչիւր Միաբանի արժեքն ու արժանիքը, եւ իմ բաղձանքներուս մեծագոյններէն մին է միշտ տեսնել զիրենք՝ իրենց կոչումի եւ արժանիքի բարձրութեան վրայ:

Հուսատարապէս Հայր Յիլիէն իր յիշուրդներս եւ գնաց եղբու տառնակաւորներս, ու ին պատանեկութեան մէջ զտաւ Կիրակ Աբեղան, ին եւ ին ընկերներուն հետ կապուած երեսասարգութեան ամբողջ առաջնորդն ու նուիրումովը: Նս կը վստահեցնեմ զինքը, այսօր, թէ այդ եռանդն ու նուիրումը ոչ միայն չէ պակսած, այլ աւելցած է անոր հետ երկու տասնեակ տարիներու ստակութեամբ, եւ եւ պատրաստ են տարանակելու իմ ծառայութիւնը, բազմապատկուած քափով:

— Իմ խորին երախտագրութիւնս կը յայտնէ Տանն Կիլիկիոյ վեհա՝ Կարօղիկոսին, իր հայրապետական ջերմ մարքանքներուն եւ զգացումներուն համար, ու թոյլ կուտամ իննքի ըսելու իրենք՝ թէ Մուսաղիմի Առաքելական Ս. Արուր իր աւխտալ Միաբանութեամբ, հաւատարմութեամբ պիտի տարանակնէ իրենց նուիրական պատգամն ու պարտականութիւնը, ոչ միայն իբրեւ պատանս եւ պահապան Ս. Տեղեացք ալ եւ իբր

բեւ Հայաստանեայց. նկեղեցւոյ նեկայացուցիչը, միջազգային այս հոգեւոր ուսանին մէջ: Կը վստահեցնեն Նորին Վեհափառութիւնը, քի իմ եւ իմ Միաբանութեան յազանքն ու սերը իր անձին նկատմամբ՝ մեն է աւ անկեղծ, եւ կը յուսամ որ իւ մեծաւորութիւնն ու ներեղիչ ազդեցութիւններն ու քեղազանքները պիտի վերադարձնեն մեր Միաբանութեան մէջ բանասիրութեան այն ոգին ու սերը, որոնց մէջ իմն այնչափ գերազանցօրէն կը փայլի:

Այս առթիւ, իմ կողմէ, փոխադարձաբար, Նորին Վեհափառութեան կը մարդեմ կտրուութիւնն եւ առողջութիւնը, որպէսզի ինքն ալ իր կտրոն կարողանայ իրագործել այն բազմանները՝ որ մեր Աթոռին համար ունի, եւ իրագործել մանաւանդ այն գեղեցիկ առաջադրութիւնները՝ որոնք նոր կեանքն եւ արդիւնաւորութիւնը կը խոստանան Կիլիկիոյ պանծալի Աթոռին:

Իմ ընտրակալութիւնս կը յայնմ նաեւ Նորին Վեհափառութեան, Կիլիկիոյ Աթոռին եւ ժողովուրդի նեկայացուցչին՝ Գեառեմորհ Տ. Խաչ Մեազանին, որ աննաւ յայնի իր ազնուութեամբ, այնքան մօտիկ եղած է մեր Մ. Աթոռին, անոր Գեառեկայութեանն աւանոր Միաբանութեան: Ես, մին եւ այն օտերէն, որոնք կրնան հրապարակաւ վկայել այդ մասին, եւ ես կը վստահեցնեմ զինքն քի մեծապէս կը գնահատենք իր այդ վերաբերմունքը: Փակ ինչ կը վերաբերի մեր զգացումներուն, հանդէպ Կիլիկիոյ մեր պատանական հայրենակիցներուն, մեր Աթոռը եւ Միաբանութիւնը՝ հպարտ եւ հաստատելու, ցոյց տալով է սեր մը որ անմախքնաց է, սեր մը՝ որ խօսով չէ վերջացած այլ զգոնականապէս ապրած է: Անոր ապացոյցներէն մին է այն կարգադրութիւնը՝ զոր ընտրեմ եւ իմ եւ վանկայիտասակ նախորդները, Երուսաղէմապետական Նկեղեցիներու եւ հաստատութիւններու նկատմամբ:

Ուրախ եմ որ այս պահուս դուք եւս կը հաստատէք մեր երկու Աթոռներուն այդ սերը իրագործութիւնը: Իմ հայրենական ողջոյնները եւ օրհնութիւնները խնդրեմ յանձնեցէ Կիլիկիոյ Աթոռի պատանաւորման հոգեւոր կատուն եւ ժողովուրդին:

— Իմ ջերմագին ընտրակալութիւններս կը յայնմ նաեւ Գեառ. Տ. Մամբէ Մեազանին իւ ընտրակալութեան խօսքերուն եւ յայն-

ման ազնիւ զգացումներուն համար, որոնք կը ներկայացնեն միեւնոյն ժամանակ զգացումներն ու բարոյանները եզրիպատկաւութեան: Նորին Մեազանութեան սերը Երուսաղէմի Աթոռին նկատմամբ՝ կը սկսի իր նկեղեցական կեանքի առաջին օտերէն, եւ երբեք չէ կտրուցուցած իւ խանդավառութիւնը: Ինչպէս առաջին օտերէնուն, նոյնպէս Սեպտուարի Ռապիւնոզական իւ պատանաւորութեան ընթացին Ս. Աթոռը միւս վայելած է իր բարեպաշտական վերաբերմունքը: Այս առթիւ ընտրակալութիւն կը յայնմն իրեն, եւ բոլորս ալ վստահ ենք որ յետագայ եւս պիտի վայելենք իր բանկալին արակցութիւնը: Երուսաղէմի Աթոռին կապը եզրիպատկաւ եւ զիպատկաւութեան հետ. իր հնութեան չափ օտ է, եւ որչափ ասելի կը պակսի Սեպտուարի հետաւորութիւնը Պաղեստինէն, այնչափ ասելի պիտի բարձրանայ այդ ջերմութիւնը եւ մերմաւորութեան զգացումը: Ես ինքն ապրած եմ եզրիպատկաւութեան մէջ ասելի փոքր օտերներ, Գառիքի Դալուստեան Ազգ. Վարժարանին եւ Ռապիւնոզարանի մէջ, եւ այդ ջերմութիւնը կը զգամ խորապէս:

Ուրախ եմ որ այս առթիւ պատկեր ունինք վայելելու եզրիպատկաւութեան արժանաւորացնող անդամներէն երեքի նեկայութիւնը, Մեծապապ Տեառ՝ Տ. Զաքրի, Յ. Կիրակոսեանի եւ Զ. Բեհեմանի: Ձեռն անոնց միջոցաւ եզրիպատկաւ պատանական մերակները՝ կը նուիրեն իմ հայրական օրհնութիւններն ու սիրազեղ սղոյնները, կըրկնելով քի պիտի աշխատենք չքերանալ մեր պատանաւորութիւններուն մէջ, պիտի ջանամք իրագործել մեր անկալութիւնները մասնաւոր օգնականութեամբ, եւ վառ պիտի պանենք մեր հաւատքին հաւաք Ս. Տեղեաց եւ Ս. Յովհաննէ մէջ: Ձեր Գեառ. Մեազանութեան հետ կը ժողովենք, ինչ որ այսօր սեպի ունեցաւ նկեղեցւոյ մէջ եւ այստեղ, եւ այն բոլոր գեղեցիկ առաջադրութիւնները որոնք հնչեցին երկու տեղերուն մէջ ալ, յայտնա եւ յոյժեղ բոլոր իրապաններէն զուր չանցնենք, այլ ունենան իրենց տեսական ազգայնութիւնն օգնականութեամբ, որպէսզի արժանաւորապէս կարգաւանմ գիտաւորել վերանկերանութեան այն նոր օտերներ՝ որ կը բացուի Հայ Նկեղեցւոյ կեանքին մէջ:

— Նորին Ամենապատանաւորութիւն ընտրա-

կալուքին յայտնեց Տէր. Գալսիեանին իրեն հանգիստ արտայայտած համակրանքին համար, եւ իր արտաքին օրհնութիւնները նուիրեց Պաղեստինի եւ Անդր-Յորդանանի Հայ ժողովուրդին: Ըստ Տէրու՝ ձեռք առնելու մէջ իսկապէս հարազատ քաղաքացիական հարաբերութեամբ Հայ ժողովուրդի հոգեւոր զգացումներուն: Հայ ժողովուրդը միտ տնայնացի է իր նկրդեցիկ ու անկեղծ անկեղծ կենսական մեծ բարիքներ: Թէ չաւախաբ չէ եղած այդ անկեղծութիւններուն մէջ, վկայ է ամենեւնի ալ սիրով եւ յարգանքի անխախտ յարաբերութիւնը: Մեր օրերուն, շարունակեց, նոյնը կը տեսնուի եւ ես կրնամ ձեր զգացում միտքաբանութիւնը ընդարձակել եւ ըսել թէ հակառակ բոլոր անհաւաստ պայմաններուն, Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատարիմ պատգամները իրենց պարտականութեան վրայ կը գտնուին զեւհաստի անձնութիւններով:

Ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս ներկայիս եկեղեցւոյ վերին իշխանութիւնը իր լաւագոյնը կ'ընէ այդ հաւատարմութեան բոլոր բազմազանները: Միտքաբանութեան եւ իշխանութեան միտքաբանութեան միտքաբանութեան: Այսօր, գրեթէ տարբերութեամբ համբերաբար աւելանում եւ զոհաբերութիւն պէտք է, ժողովուրդը տեսնուած լաւագոյնը վարժարանի եւ Ընծայարանի երկու յաջորդական դասընթացներին եւ հասցնելու: Բանաւորական աստիճանին: Եւ աւելցուց թէ յոյս ունի որ «Սուրբ Աթոռոյ այդ նուիրական հաստատութիւնը Միաբանութեան ջանքերով պիտի զսկեր իր լաւագոյն արդիւնաւորութեան ընթացքը: Միտքաբանութեան վարժարանի նկատմամբ Նորին Ամենապատգամութիւնը հպարտութեամբ յայտարարեց «այդ հաստատութիւնը Ս. Աթոռի անհրաժեշտութեամբ աւելանում է մին կը համընթացայ, եւ կը յուսանք ոչ միայն ընդարձակել ներկայ շինքը, այլ մօտ ապագային ունենալ նաեւ աղջկանց առանձին վարժարան մը: Անոր նման սեպհական վարժարաններ պէտք են նաեւ Հայֆայի եւ Ամմանի մէջ: Ս. Աթոռոյ կրթական աշխատանքներուն ընդարձակման եւ յաւաքումներէն համար յուսալից եմ, որովհետեւ մեր պատգամները Միաբանութիւնը՝ կրթական գործին վրայ կը հայի իբրեւ իր ա-

ւագ պարտականութիւններէն մին: Այս գնահատելի իրականութիւնը ուրախութիւն պէտք է պատճառէ մեր բոլոր ժողովուրդին, վասն զի, այս կերպով մեր աւելի մեծ ուսուցողութիւն կընայ նուիրել իր ազգային մնացեալ պարտականութեանց: Հոգեւորին հետ մեկ կը ստանձնենք կրթական գործը եւ մնացեալ պարտականութիւնները կը բոլորեն ձեռք յուսալով որ պիտի չբերանա զոհողութիւններու առջեւ, զարգացնելու կենսական ապագային մէջ թեւակոխող հայ երեսասարդը՝ Գիշերական եւ մատուցական, եւ մատակցական մէջ այն նմանութիւն հայրենասիրութիւնը՝ որ պատգամ է ամեն բան զոհելու, հայրենիքի սիրուն եւ գերազանց տանքներուն:

— Նորին Ամենապատգամութիւն իր հայրական օրհնութիւնները նուիրեց նաեւ ժողովուրդին եւ աւելցուց. «ուրախ եմ որ այս օրունք ընդհանուր հրճութեան մէջ դուրս ալ ունենալ ձեր իրաւոր բաժինը: Կր հաւատամք թէ ինչ որ ըսիք ձեր ընկերոց բերնով՝ անկեղծ է, եւ ես ալ նոյն անկեղծութեամբ եւ զգացումներով պիտի շարունակեմ իմ հայրական պարտականութիւններս հանգիստ մէջ եւ ձեր սիրելի հաստատութեան, որ կը գրաւէ իմ արժանաւորութեան ծախքը»:

— Նորին Ամենապատգամութիւն շնորհակալութիւն յայտնեց նաեւ իրաւապահին Հայ Սեփականութիւններուն, որոնք ազնիւ փափաք ունեցած էին արտայայտուելու օրունք համընթաց մէջ. եւ ըստ Սուրբ Սուրբ Սուրբ վարժարանի ողջի կը խօսի ձեր մէջ եւ կ'աղարթուի իր փառաւորութիւն, վարժարանին դուրս: Յաջորդութիւն կը մտադրեմ ձեր բոլոր բարեկամական եւ օգնական ջանքերուն:

Նորին Ամենապատգամութիւն իր շնորհակալութիւն յայտնեց նաեւ այն ազնիւ ազգայնաց, որոնք՝ անձամբ, անմատչելի կամ հեռագրաւ իրենց սերն ու յարգանքը եւ բարեմաղթութիւնները բերած էին օրունք համընթաց եւ զմահաւանդ զպրաք դասի եւ երգչախումբի եւ անոնց վարիչներու յաջորդութիւնները, վերջացուց իր խօսքը ըսելով.

«Ս. Աթոռոյ օրհնութիւններով կ'օրհնեմ բոլորդ, ամբողջ հոգեւոր եւ արտաքին, եւ իբրեւ մէկը որ հայրենիքի ուխտագնացութենէ նոր վերադարձած է, կը յիշեցնեմ ձեզ՝ ձեր հայրենասիրութեան նուիրական պարտականու-

քիւնը՝ որ արտասանմանի բոլոր հայերուս ուսերուն եւ սրտին վրայ կը ծանցանայ. այդ իրադրոճման մէջ է որ իսկապէս պիտի կաւեննա՞ւ արժեցնել ձեր հայրենասիրութիւնը:

Կը մաղթեմ որ Աստուած բոլորիդ պարգեւէ խալաղ կեանքդ այս Ս. Նիկիին մէջ, որպէսզի հանգիստ օրով կարենայ կատարել ձեր ամենակական, համեմային եւ փառաբանական պատրաստութիւնները եւ պատիւ բերե՞ն ձեր ազգին»:

Սրբազան Պատրիարք Հօր խօսքէն հաջորդեալ երգուած «Հայր մեր»-ով ու Սըրբազան Պատրիարք Հօր օրհնութեամբ կը վերջանայ սոյն հանդիսութիւնը եւս: Սյեւուս Արքեպիսկոպոսները կը շնորհաւորեն Ամենապատիւ Գահակալը: Եւ ապա Ս. Աթոռոյ միաբան վարդապետներ կարգով կ'երթան որդիական ակնածանք խոնարհիլ իրենց Հօր և Պետին աջին, և ընդունիլ Անոր Հայրական ողջոյնը: Միաբանութենէն վերջ հանդիսականները կը մօտենան ու կը շնորհաւորեն արքայական հրովարտական աստուածած Գահակալն ու իրենց Հօրը: Ժամը 6.45 է արդէն երբ կը սրուի ժողովուրդը, ու Սրբազան Հայրը քանի մը վայրկեաններու հանգստի համար կ'առանձնանայ իր սենեակը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՂԱՆ Ի ՊԱՅՏԻ ԱՄՍԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ

Նախապէս եղած կարգադրութեան համաձայն, ժամը 7.15ին Սրբազան հիւրերը, Միաբանութիւնը, Ժառանգաւոր Սաներն ու Ս. Աթոռոյ աշխարհական պաշտօնիւններ և յարգելի հիւրեր ու ներկայացուցիչներ, Ս. Աթոռոյ սեղանատան մէջ նստած են սիրոյ և ուրախութեան ընթրիքի, բոլորուած Ամեն. Ս. Պատրիարք Հօր շուրջ: Հոն են՝ Եղիպտոսէն, Պէյրութէն, Անգլո-Յորդանանէն, Հայֆայէն, Եռպղէն, Ռէմլէն և Ներուսաղէմէն յարգելի ազգայիններ, պատգամաւորներ, տեղական մարմիններու և կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Կ'ըլլան ուղերձներ ու բաժակահաներ և մաղթանքներ Ամեն. Գահակալի առողջութեան, Ս. Աթոռոյ պայծառութեան և Նիկիեցւոյ հաստատութեան համար: Հուսկ ուրեմն Ամեն. Ս. Պատրիարք Հօր խօսքով և աղօթքով կը փակուի մտերմական իր մթնոլորտով գեղեցիկ այս պահը եւս:

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Պիտի չուզէի լուռ մնալ, ակամասեալ ըլլալ վերջ արաստովոր շուրջ եւ օճեղութեամբ կատարուած գանակալութեան հանդիսութեանց:

Պիտի չուզէի խեղդել զգացումներս եւ զլպել անհուն ուրախութիւնս եւ յուզումս ի սեւ այն խորհրդաւոր եւ միաշիւ մըքնութիւն՝ որուն մէջ կատարուեցան գանակալութեան հանգիստութիւնները:

Ալիսեցի՞ Սրբազան Հայր, հաւատարիմ մնալ մեր Ս. Նիկիեցւոյ, ազգին ու կայսեր, այնպէս ինչպէս Ձեր երջանկայեալ Գահապետներ ուխտած էին: Անոնք ալ յուզումով Ձեզի նման կատարած էին իրենց ուխտը, բայց կը համարձակիմ ըսելու ոչ այն մըքնութիւն մէջ՝ որ կը տրեւ այս անգամ:

Ուսագրութեամբ մտիկ ըրի Լուսարապէս Գեր. Տ. Նիկիե Վրդ. Տերեւեանի սրբառու ուղերձը, Գեր. Տ. Խաղ Սրբազան Արքեպիսկոպոսի, Գեր. Տ. Մամբէ Սրբազան Արքեպիսկոպոսի, Մեծայաղ Տօբոր Վանան Գալպիտանի, ի դիմաց պաղտօնանալութեան, եւ Հ. Ե. Միւրեան Ասեմապէս Պր. Կարապետանի, սրագին եւ գեղեցիկ ճառերը, ինչպէս նաեւ Ժառ. Վարժաւանի առակներին որդիական արայայայտութիւնն ու մաղթանքը, ու այս բոլորէն վերջ՝ Ձերդ Ամենապատուութեան սրտէն յորդապանուած խօսքերը: Այս բոլորը բան մը կ'ըսեմ, շատ սիրելի բան մը:

Դուք, Սրբազան Հայր, խօսեցա՞ք ձեր ուսերուն դրուած բուրգերու մասին, բայց, սիրոյ մթնոլորտ որ կը տրեւ այդ երեկոյ, հալեցուցած էր այդ ամէնը, եւ դուք բուրգերուն ծանրութիւններէն արգէն իսկ զարմանալիօրէն թերեւցած կը զայիք: Որչափ մխիթարական եղաւ մեզի բոլորիս թանել եւ զգալ այն սիրոյ կապերը, որոնք այնքան զօրացած են վերջերս մեր Գաւառապետական Աթոռներուն վրայ բազմալի հովուապետներուն միջեւ: Որքան սրտազնոյց մանաւանդ՝ նկատել թաղուն այն սերը, որ Ձեր Ամենապատուութիւնը եւ Ս. Թակոբայ Միաբանութիւնը կը կապէ իրարու: Զգացիմք թէ անցած էր փոքրիկը Աստուծոյ այս Ս. Տանը վրայէն, եւ